

ԳԼՈՒԽ ԺԳ

Դու, որդեակ իմ Յերմե, դու իմ յոյս գեղանի.
Դու պտուղ իմ երկանց՝ յարատել վաստակոց,
Նպատակ սիրելի տասնամեայ իմ հրսկմանց,
Որ այնչափ ծանր՝ անուշ խրնամք ինձ արժեցիր,
Մըտերիմ բերկրանաց եւ դարման իմ վըշտաց.
Յեռաւոր ծովերու՝ հեռաւոր հողերու,
Անուշիկ իմ ընկեր անստոյգ քայլերու,
Ով որդեակ իմ, այսօր ինչ է քո ճակտի գիր:

ԱՆԴՐԷ ՇԵՆԻԷ

Թումայ իւր քրոջ այս բռնութեան կամայ, ակամայ հնազանդիլ պարտաւոր եալ էր, ինչչափ որ հոգին ապստամբեր: Այն խօսքը՝ «Ես քեզմէ զօրաւոր եմ», լաւ կը հասկնար, վասնզի գիտեր թէ իր ազնիւ քրոջ մէկ խօսքը բաւական էր զինք պաշտօնով կամ անպաշտօն Ափրիկէի կամ Աիկիլիոյ մէկ կողմը աքսորել տալու, ինչպէս քանի մը անգամ սպառնացեր էր. ուստի լռեց եւ համբերեց եւ հետաքրքիր՝ կը սպասեր իմանալ նպատակը:

Անկելինայ մէկ գիշեր փոքրիկ երեկոյթ մը տուաւ իւր պալատը: Կայսրորդին Կոստանդ միայն հրաւիրուած էր այս ընտանեկան հանդիսին. Արփենի իւր տարեկից եւ ընկերակից աղջիկներով, նուրբ բեհեզներ հագած զանազան եւ նտորահնար կաքաւներ կը պարէին, որոնց համար մասնաւոր վարպետով վարժուած էին առաջուց: Պագշոտ եւ գերծ կաքաւին՝ մեղկ եւ լկտի երաժշտութիւն մը կ'առաջնորդէր: Թագաժառանգ իշխանը դեռահաս պատանի՝ տանտիկնոջ քով նստած հագիւ թէ նորա փաղաքուշ խստբերուն կը լսէր՝ իւր բոլոր ուշադրութիւնը՝ պարը, երաժշտութիւնը եւ սիրոյ լպիրշ երգերը գրաւած կին, եւ իւր երեսին գոյնը վայրկենէ վայրկեան կը փոխէին: Աչաց ակնարկն այդ մանր եւ թեթեւ կայթող ոտից հետ հիռ կ'ուզար, այդ փափուկ մարմնոց ամեն բեկբեկ տատանմունքը իւր գլխուն համակիր շարժմունքներ կը պատճառէին, որ Անկելինայի դիւական աչքերուն գոհութեան ժպիտ կը բերէին: Ենթ ուրախութեամբ կը դիտէր թէ արքայազն պատանին արդէն սրարբեալ՝ յիմարեալ էր պագշոտութեամբ եւ փոքրիկ հառաչանքներ կը խեղդէր. ուզելով զինք համարձակեցնել, ակնարկեց եւ անուշ ըմպելիք ու քաղցրահամ մրգերու սեղան մը բերուեցաւ: Իւր դիւթիչ ձեռք Տիկինն ինքը արքայազնին կը մատուակէր, որ վերջապէս չի կրնալով համբերել, եւ գինուով զօրացեալ՝